


18564



1914

2003

W 1205 (67)

ՀԵՂՈՍ ՏԻՐՈՒՄԵԱՆ

# ՀԵՂՈԾԹՎԵՐՓ

11.99  
5-66

W 1205



4282

891.99  
5-66

Մ.

ՏԵՐՈՍ ՏԵՐՈՍԵԱՆ

100/  
4185

# ԼՈՒՍԵՏԱՐՓ



ԹԻՖԼԻՍ

Արտադրության հասպելամբու ելիդ. № 17.  
1914

# ՄԵՐԵԱՆ

Մենք յաւէտ բաժանւած ու յաւէտ միասին,  
Որպէս մարդ ու Աստւած աշխարհում հիազօր...

Երազում է միանձնուհին խրախճանք  
Արքայական պալատներում խենթական,  
Հարսնացու է ինքը այնտեղ և պատրանք...  
Ու կանչում է ժամփաներով մեղսական...

Թագաւորի աղջիկները գեղեցիկ  
Պար են գալիս, ցնորւելով տարփանքում,  
Իսկ նա կարմիր ակնարկներով հրածիդ  
Սէրը այսօր ամենին է խոստանում...

Ամենին է այսօր տալիս նա փափագ  
Ու ցոլում է ամեն մէկի նա յոյսին...  
Երազում է... Երազում է նա անյագ,  
Երազում է նուրբ հարսնացուն Յիսուսի...

Հեկեկում են աղօթքները փրկարեր  
Եւ մարում է սուրբ կանթեղը խաւարում,  
Կործանւում է մենաստանը ցանկասէր...  
Իսկ նա... այնտեղ... Երազում է աշխարհում...

## 2

Քիչ սպասիր, հանգստացիր, որ շուտով  
Լուսնի շողից լուսամուտս կ'աղօտի...  
Ես դուրս կելնեմ, մենք կը լինենք երկուսով  
Ու կը վառենք ցնորքները կարօտի...

Կը կատարենք ցնորքները կարօտի,  
Որ ծնուել են խելացնոր քո սրտում...  
Շուտով, շուտով, երբ ապակին աղօտի,  
Մենք կ'հանդիպենք հեռու, հեռու անտառում:

Մենք կը սիրենք ու կը տրտմենք երկուսով  
Եւ Աստիածը բարձրունքներից կ'հիանայ,  
Դու կը խնդրես հեռաւորի մեղմ լուսով  
Որ մեր սէրը ոչ ոք, ոչ ոք չիմանայ...

Կէս դիշերին, երբ լուսինը հեռանայ,  
Կը վախենաս զու խաւարի չարքերից...  
Հանգստացիր, սէրս քեզ չի մոռանայ.  
Մէրս հէքիաթ է, սէրս երգ է ու թախիծ...

## 3

Ախ, ինչ նուրբ են ճօճւում ալից,  
Ժպտում երգին կարապի,  
Շուշանները անմեղ, անրիծ,  
Ծովափի...

Ախ, ինչ մեղմ են ալիքները  
Շոյում միտքը ժէռ քարի,  
Այնտեղ թախիծ, այնտեղ սէրը  
Վիթխարի...

Տես, լազուրը խինդ է նետում,  
Գուրգուրում է սև հողին...  
Յաւէտ հեռու սէրն յաւէտում  
Սիրողի...

Այսօր ես տեսայ քեզի երազում՝ դուն ինձ մօտ եկար,  
Ու բացւեց շուշան, ու ծագեց արև հեղ ու բարետու.  
Եւ լաւ էր այնքան, կարօտս էր սիրում, ուրախ էր  
աշխարհ,

Ու լոյս էր այնպէս իմ մենաստանում... ինձ մօտ  
եկար դու...

Ես չը գիտէի, հաւատամ արդեօք լացած աչքերիս՝  
Գուցէ երազ է, կարծեցի այնժամ արցունքի միջից...  
Բայց ես տեսայ քեզ, բայց դու ճիշտ եկար, որ լաց  
օրերիս

Ասես սիրոյ խօսք, տաս սիրող երդում, փրկես գա-  
հիճից...

Դու, իմ թագուհի, անյագ փափազով փարւեցիր կուրծքիս  
Եւ լացիր, լացիր... ու արցունք թափւեց քո գեղ  
աչքից.  
Ինձ սիրում էիր... Ախ, ես գիտէի, որ մթար կեանքիս  
Նոր օր ես բերել, օրօր ես բերել հեռու տեղերից:

Ես չը գիտէի, հաւատամ արդեօք լացած աչքերիս՝  
Ախ, նոքա այնպէս սիրում են խարել միրաժով անհաս...  
Ու ես խենթացած, արբած ու անշունչ բաղդիս ցոլ-  
քերից  
Վախենում էի, ու դողում էի որ լինի երազ...

#### 4. Ա Պ Զ Խ Ա

Դու, որ եղել ես արևից առաջ,  
Նոյել մեղմօրէն, քանց շողը լուսնի,—  
Ի՞նչպէս քեզ կանչէ իմ սէրը անաչ,  
Բարես լազուր ի՞նչպէս քեզ հասնի...  
Խօսքեր չը գիտեմ բարձր արևից.  
Ի՞նչ են խօսքերը, որ պատմեն թախիծ...

Դու, որ այգերգին հօրիզոնն անծիր  
Նւէր բերիր ինձ հմայքով անուշ,  
Դու, որ ցոլանքով ինձի պատեցիր,—  
Քեզ ի՞նչպէս գտնեն խօսքերս անուժ...  
Հօրիզոնից սուրբ խօսքեր չը գիտեմ,  
Սուտ են աշխարհի խօսքերը քո դէմ...

Եկել ես գուն ինձ... Այնտեղ քեզ այնքան  
Ասազերի հէքիաթ, օրօր է եղել,  
Ճերմակ ես հագել դու, որպէս շուշան,  
Ճերմակ հարսնացու, դուն ինձ ես եկել...  
Ի՞նչպէս քեզ կանչեմ, արդեօք հվ ես դուն.  
Շուշանից ճերմակ չը գիտեմ անուն...

## 6

Պալատ էր նա, մառմառոնեայ, ձիւնի պէս,  
Անափ ծովում, ժայռի վերայ անառիք.  
Այնտեղ իշխող լոկ արևն է սիրակէզ,  
Սիրող ծովն է լոկ նւիրում իր ալիք:

Մարմնացրի իմ հանճարը պալատում.  
Ծով ու արև՝ հզօր տարրերն աշխարհի,  
Քանց աղօթող, դղեակին են հաւատում,  
Անյագ խմում սուրբ հայացքը մառմառի...

Շքեղ բուրգում, իմ պալատում հիազօր,  
Լոկ ներհիւսած քնքոյշ իմ նուրբ իղձերից,  
Տեսնում էի ես թագուհուն ամեն օր...  
Իմ թագուհուն՝ կարծես հիւսած եթերից:

Բայց հէնները օրւայ գաղտնիքն իմացան  
Ու փախցրին նրան խաւար գիշերում.  
Ա՛խ, չար մարդիկ այնքան հեռու հեռացան  
Կործանելով աշխարհները իմ սրտում...

Պալատն հիմայ ծերացել է հէգ լացից,  
Զոր ու գիշեր մթնշաղով փաթաթւել...  
Իմ ձիւնազարմ սեպ սիւները ապրածից  
Ծերացել են ու մառմառը սեացել:

Եւ հեռացան ծառաները սգաւոր,  
Եւ անմշակ խենթանում է իմ այգին...  
Մութ... էլ չը կայ իմ օրերին սեղմ օրօր,  
Վիշտն է շոյում խելացնոր իմ հոգին:

Ծով ու արև՝ դմբած կեանքի հեգնանքով,  
Ինչ որ կուղեն խրախուսել, ժպտալ ինձ.  
Բայց ես վաղուց էլ չեմ խօսում այդ խօսքով,  
Չեմ հասկանում ես բնութեան քառերից:

իմ պալատում՝ ամեն ինչը ամայի,  
Դատարկ, անմիտ ու տիրում է լոկ սև ահ...  
իմ քնարը էլ անլար է ու վայի  
Եւ իմ հոգում գերիշում է միայն մահ:

## 7. Մ Ե Բ Ա Ծ Ա Է

Ես դիցուհի մռւնիմ փոքրիկ, նազելի,  
Ես նրան եմ պատմում վէրքերն իմ սբախ.  
Նա լուռ, նա մունջ, ժպիտներով վշտալի՝  
Հեզ լսում է պատմւածքը իմ դարդի...

Ես սիրում եմ իմ դիցուհուն լուս ու մռնջ.  
Ահա կրկին նա նայում է ինձ խոնարհ՝  
Նա լսում է իմ թախիծը անտրտունջ,  
Նա տրտում է, նա տրտմում է ինձ համար...

Չռւնիմ ուրիշ աստղէ ուղի ու չըկան  
Ուրիշ ցնորք, ուրիշ երազ, ուրիշ կեանք,  
Նուրբ հայացքում նրա քնքոյշ, կուսական,  
Ես ապրում եմ և սէր և յոյս և փրկանք...

Բայց նա լուռ է... Զի ըմբռնէ երբէք ինձ.  
Հոգուս լուսէ տագնապները և ուղին...  
Նա նայում է իմ սեղանի վերայից  
Յաւէտ անխօս—իմ ապակեայ դիցուհին...

Թերթերում ամեն տեղ քեզ գգուանք,  
Ամեն էջ քեզ նոր սէր է նետում,  
Բայց ինձնից սիրոյ խօսք, սփոփանք  
Չես կարդայ հրանուտ էջերում:

Թէ մի խօսք, սիրոյ հետ շաղկապւած,  
Իմ սրտում քեզ մնաց ասելու, —  
Դա ծաղկի անգարուն թառամած  
Տխուր երգերից եմ հիւսելու:

Քեզ տալու պատկերներ եթէ կան  
Որ պահեց իր ծալքում իմ հոգին,  
Այդ դու ես... քեզ օտար... քեզ նման  
Շատ առաջ, շատ առաջ, իմ անգին...

100  
100  
100  
100

Դու մեռնելիս ինձ խոստացար որ կըգաս  
Ամեն գիշեր իմ երազում լոյս ու տաք,  
Որ կըշոյես իմ ալցոննըը ու կըտաս  
Իմ սուգ կհանքի խաւար կէսին արեգակ:

Դուն ասացիր, որ սուգ չանեմ ու չըլամ,  
Մարգարէի համբերութեամբ սպասեմ.  
Ինձ ժպտացիր՝ ամեն գիշեր ես կըգամ,  
Քեզ լուսեղէն սիրոյ խօսքեր ես կասեմ...

Քեզ նայում եմ, սպասում եմ, սուրբ աղջիկ,  
Մինչև գիշեր ես չեմ ապրում ու չըկամ.  
Ես մեռնում եմ խիզախ տենչով իմ շրջիկ,  
Իմ կարօտած հարսնացուին դուռ բանամ...



Սպասում եմ ես խենթացած կարօտով  
Քեզ, իմ սիրուն, իմ սիրասուն, իմ անհաս...  
Լուսանում է ու մեռնում եմ ես շուտով  
Քեզ չըտեսած... Ախ, դու չըկաս, դու չըկաս:

Դուն էլ չըկաս, դու չես ճնշի ինձ համար:  
Ինձ խարեցիր, ինձ խարեցիր, իմ անգին,  
Դուն իմ հոգուն տւիր երազ անկատար,  
Մի խենթ կարօտ լցրիր դատարկ իմ հոգին...

10

Տես, ցողն է իջել չորցած վարդերին,  
Չորցած վարդերի, մեռած վարդերի  
Նիհար թևերին...  
Բայց էլ չի շոյում թաւիշը վարդի  
Տագնապը սըրտի երկնից եկողի,  
Խիզախ սիրողի...  
Ու էլ չի շիկնում գաղտնօրէն գալուն,  
Նա էլ չի լալիս մեղմիւ փարւելուն  
Քնքշօրէն լալուն...  
Բայց ամեն գիշեր կայլակներն անբիծ  
Երկնածին սիրով իջնում են երկնից,  
Իջնում են երկնից  
Ու սուգ օրերի, մենակ օրերի  
Մարսափն են պատմում չորցած վարդերին,  
Մեռած վարդերին...

18

19

11

Ծովի յատակէն մարգարիտ կ'հանեմ—  
Կուրծքդ գեղալիր ցողեմ արցունքով,  
Ես խենթ եմ հիմայ—կ'անցնեմ աշխարհով,  
Քեզ համար հազար հրաշքներ կանեմ...

Քեզ համար կ'անցնեմ ամպերը անանց,  
Արեի շողից բարե կըրերեմ,  
Կարւանն աստղերի քեզ կընւիրեմ,  
Քեզ կըպարուրեմ արփիով վեհանձ...

Ահա՝ նոր արե... Ու ես լուսի դէմ  
Կուրգամ աղօթքի, կըխրնկեմ իւղեր,  
Քեզ համար այնտեղ ինչքան օրօրներ  
Ու սիրող սրտի նւազ կ'ուղերձեմ...

Եւ գու, կուսազարմ, իսկոյն կ'ամաչես  
Սիրոյ ամօթից հմայք խօսքերի,  
Ու մինչ լուսարեր, իմ աղիղ փէրի,  
Դու երջանկութեան շողեր կըցանես...

1

Արեի աստղից մինչ խաչն արեի  
Դուռս է ծեծում անձրել աշնան...  
Զմռան հարսնացուն լաւ լուր չի բերի.  
Աշունը այսօր տխուր է այնքան...

Սուլոցը՝ երգող կուի հրաւէր,  
Համօղում է ինձ իմ պատերի տակ,  
Ու մոռանալով Աստւած ու վրէժ  
Հեղնում է, ծաղրում որպէս ստահակ...

Վէրքերից մեռան շուշանները իմ...  
Ինձ դուրս չի թողնի կատաղի քամին,  
Մենակ եմ այնքան... Սիրող, մտերիմ  
Զունեմ ես ահա աշնան տարափին...

## 2

Անվերջ մենութեան իմ հին պալատում  
Տիրանք օրերիս՝ անյոյս կոկիծով  
Ես ում եմ կանչում առիւծ-թախիծով,  
—Ում եմ արցունքով այդպէս հաւատում...

Աղքատ եմ հիմայ... Անդարձ եմ վիժել  
Ուր՝ ես չըգիտեմ, ինչու-չըգիտեմ,  
Կանչերը սրտիս գարուն—լուսադէմ...  
—Ում եմ խենթօրէն ես այդպէս սիրել...

Եւ ուրուն դժգոյն, ուրուն սիրասուն  
Գալիս է մերթ-մերթ ինձ ասում օր-օր.  
Երգեր է երգում հարազատ եղբօր...  
—Ել ում եմ, ում եմ այդպէս սպասում...

## 3

Թափուում են ահա երգերս կրկին  
Երաղ եղածի տարփանքով գերած,  
Կանչում եմ լացով օրերս անցած,  
Դուրգուրել կուզեմ ժպիտներս հին...

Բագինը խլեց յոյսերը լուսէ,  
Փէրուս զոհ բերի հիացքից անաչ...  
Ես ինչպէս գրկեմ մենակութեան խաչ  
Եւ ում հրաշքի երգերը հիւսեմ...

Ցոլանքս գցեց շուրջս կարօտ ծով...  
Իմ կանչը տիտոր-զուր է յետ նայում,  
Խոսքերս նախկին էլ չեն հմայում  
Ու յետ չեն բերի կարօտի լացով...

## 4

Ես սիրում եմ ու այրում եմ սէր ու ցաւ,  
Ես փակում եմ փականքները իմ կեանքի,  
Կործանում եմ շաւիդները փրկանքի,  
Վերջ է, վերջ է, հուրն անշէջ է, վերջացաւ...

Ես պարփակւած, շուրջս հրդեհ-հօրիզոն,  
Շուրջս կարմիր հուրեծածան լեզուներ,  
Ես վայրենի, ես պարում եմ խենթ պարեր,  
Հիմն եմ երգում... Յաւերժութեան մի նոր ձօն...

Յաւիդները հեծկլտում են ու վառում...  
Արի, արի, անցիր, անցիր-ինձ կ'ասեն,  
Փականքները շառաչիւնով կը բացւեն...  
Ես՝ բաժանւած, երգ եմ ձչում ու պարում:

## 5

Մենութիւնն անօրէն ինձ տիրեց,  
Անօրէն դուն ինձնից հեռացար.  
Զը գիտեմ, արդեօք շնուտ մոռացար  
Ցաւերդ՝ որ հոգին իմ սիրեց...

Աշխարհում երկուսով մենք անբաղդ՝  
Ցոլանքը սիրեցինք աստղերի,  
Իմ օրը քեզ նւէր ես բերի  
Իմ կեանքից մենաւոր ու աղքատ...

Այնքան հեշտ գողացար օրը իմ...  
Աներկունք մօռացար օրը սև.  
Քեզ փրկանք, քեզ հանգիստ, քեզ արև,  
Բայց ինչպէս առանց քեզ ես ապրիմ:

Ես զուր եմ փնտրում... Մեռնող օրերին  
Իմ անգոյն կեանքի սէր չեմ դանելու,  
Անհաս աշխարհում ես չեմ սիրելու,  
Լոկ երազանքն է իմ հոգու վիշտին...

Ու ես՝ սգաւոր, լուսէ երազում,  
Ես գուրգուրում եմ յոյսերս անծիր,  
Ես... որպէս մանուկ՝ վարդերը կարմիր  
Կեանքի յոյսով եմ ցողում աւազում...

Հոգիս ինչե՞ր է խոկում ցնորած,  
Էլ ինչ է սիրել յաւէրժ որոնում...  
Ա՛խ, թէ միշտ ապրեմ երազ օրբանում,  
Ա՛խ, թէ մոռանամ ծաղիկը թոշնած...

Դու մեռար ու մեռար դուն անդարձ  
Իմ պայծառ յուշերում, հոգուս մէջ;  
Ու մնաց այնտեղ ցաւ մի անանց  
Ու ապրեց ցնորւած, իզուր տենչ:

Զէ՞ որ դնւն հիւսեցիր իմ հոգին,  
Զէ՞ քո սէրն ստեղծեց ինձ աշխարհ...  
Իմ հոգում՝ մառախուղ անմեկին  
Ու լացն ակորդի հողմահար...

Ես այսօր կ'հեռանամ առյաւէտ...  
Ես այսօր կըվառեմ խարախճան...  
Ես այսօր հւմ սիրեմ գալրնան հետ.  
Գալրնան հետ ինձ ծաղկեց լոկ վախճան...

Արդեօք ով էս խաւար գիշերին

Մտերիմ որոնեց

Ու լռեց...

Արդեօք ում լուսերանգ յոյսերին

Նուրբ փէրին իր տանից

Ծիծաղեց...

Չըգիտեմ... արդեօք ով ինձ համար

Կըստեղծեր երազներ,

Սիրելով...

Չըգիտեմ, բայց այսօր դու եկար

Կըակներ ու լոյսեր

Մարելով:

Կըակներ ու լոյսեր մարելով

Ծիծաղով մոռացման

Դու եկար...

Արդեօք ով ինձ համար, արդեօք ով

Խաւարում մենութեան

Կ'ճեկեկար...

Ես էլ ոչ ոքի ոչ մի կշտամբանք,  
Սիրոյ տագնապներ էլ չեմ պարզելու...  
Ես յաւէրժութեան երգ չեմ տաելու.  
Բնդմիշտ կըպոկեմ հոգուց կարօտանք...

Դու մի վհատիր, դու ապրիր, ապրիր  
Ու մի որոնիր արձագանք իմ մէջ...  
Ես սուզ եմ կապել՝ լալուկ ելեէջ  
Մենակ օրերիդ դու մի որոնիր...

Մի ցանիր մոխիր օրերիդ տիսրանք,  
Ես քեզ կըսպասեմ իմ մենանտառում.  
Ու երբ դու տեսար որ յոյսդ ես վառում,  
Օ, փախիր, փախիր, երկուսով սպանք...

10. ԱՂ Թ Փ Ք Ո Ւ Օ Բ Ո Ւ

Կեանքիս աշնուտին չըգիտեմ ահա  
Ո՞ր խօսքով օրհնեմ սրբութիւնը քո,  
Քո մօտիկութեան անուշը անմահ,  
Քո լուսեղութեան հզօր երեկոն...

Կարօտս, մեռնող ցնորք-ցնձանքից,  
Մարենք լոյսերը ցուրտ ու սպաւոր,  
Ու միակ յոյսի մահացող կեանքից  
Օրօներ հիւսենք... Ազօթք ու օրօր...

Քեզ համար, ահա տես, ես ինչքան օրօներ,  
Ծաղիկներ հիւսեցի լուսալիր ու անբիծ,  
Նոքա իմ երգերի սիրահեղձ օրերից  
Առյաւէտ մնացին խենթացած կտորներ...

Ես ունեմ քեզ համար ոսկելար մի քնար,  
Քեզ համար ես ունեմ ալմազէ մատանի—  
Բայց ուղին միասին մեզ առաջ չի տանի.  
Ու սկ է ալմազը պարուրող մեզ իրար...

Մենք յաւէտ բաժանւած ու յաւէտ միասին,  
Որպէս մարդ ու Աստևած աշխարհում հիազօր...  
Չըգիտեմ, կ'հեռանանք գարերով մենք այսօր,  
Չըգիտեմ, կը հասնենք լուսածին քո յոյսին...

## 3

Արեի նինջին դու եկար ինձ մօտ  
Անմեկին ցաւով, տրտմանքով անծիր...  
Լացած աչքերով դու քեզ մատնեցիր՝  
Արցունքում ցոլաց մի դաժան կարօս:

Ուշ էր, իմ սիրուն... Արեը կարմիր  
Մեռնում էր տալով շողերը վերջին,  
Մոխիր ցանեցի ես իմ զուր տենչին.  
Ես... յոգնել էի երազում անլիր:

Բայց լուսաբացին սիրավառ սրտով  
Սպասում էր քեզ իմ սէրը դալար,  
Սիրող արեին դուն ինձ մօտ չեկար...  
Ու ես ծերացայ մարած կարօտով...

Ել ինչ ես փնտրում, ել ինչ ես լալիս,—  
Լուս մթնշաղին սէր չեն որոնում...  
Կեանքս գունատեց սիրատենչ օրում,  
Թու արցունքները ինձ կեանք չեն տալիս...

## 2

Վախենում եմ, օտարական, խորթ ընկեր,  
Որ հասկանաս դու անդունդը մեղ մենող,  
Որ ըմբռնես դու նեկտարը՝ սաեղծող  
Թու սուրբ սրտի հէքիաթները լուսաբեր:

Ես մառ պատգամ կեանքի ունայն, վէս ու սին,  
Քեզ սիրեցի, բայց ախ, սև է սէրն օրիս...  
Ստեղծեցի, բայց դատարկ է մութ հոգիս.  
Դու անանուն, դու հարսնացու. Յիսուսի:

Աղօթում եմ... բայց կը հասնե՞ն, կը լսւե՞ն  
Աղօթքները խորհուրդների հողմաշունչ...  
Այնքան կուզեմ որ նոր օրեր սկսւեն  
Եւ լուսանան երազները իմ անունջ...

## 4

Ինձ մի սպասիր... Մենակ թիավար  
Ճամբայ եմ ընկել ու հեռու կերթամ,  
Արև եմ սիրել, ծովս է ինձի մայր,  
Տեսնենք ուր կ'համնեմ թափերով տարտամ...

Ճամբես անորոշ, անորոշ իմ էղձ,  
Ինչու և ուր եմ արգեօր ևս գնում...  
Չը գիտեմ, քոյրիկ, ով է կանչում ինձ,  
Չը գիտեմ, քոյրիկ, ինչն է ինձ վանում...

Ինձ մի սպասիր, աղօթք մի լայիր  
Դուն ինձի համար, քոյր իմ վշտարեկ...  
Հասկացիր, հոգիս, դուն ինձ հասկացիր,  
Ցոլանք իմ օրին գալու չէ երբեք...

## 5. Հ Ա Խ Ս Ի Ս Ո Ւ Ի Մ

Կը ներեմ Հիւսիսին ձիւնաւոր  
Իմ բոլոր արցունքները ցաւի,  
Թէ լսեմ ևս նորից տաք օրօր  
Ու ապրեմ վայրկեանում Հարաւի...

Կը ներեմ, կը ներեմ թէ մի օր  
Այստեղի աչերից հողմարեր,  
Ինձ ժպտան սիրասուն, հիազօր,  
Հարազատ երկնքի առկայծներ...

Կը մոռնամ իմ բոլոր մենութեան,  
Կարօտի ու ջերմի հեկեկոց,  
Թէ մի օր, լոկ մի օր ինձի տան  
Հարաւի... Հարաւի երկնաբոց...

## 6

Իմ բաղդը՝ որպէս անյայտ ցոլցոլանք,  
Անանուն ծովի մտքեր տարածուն...  
—Ալիքները մերկ, ափերը անյանգ  
Քեզ չեն դրկելու, տեսչ իմ փառազուն...

Ենիլ իմ սիրասուն... Ես էլ չեմ յիշում  
Ես չեմ հասկանում իմ սէրը անիղձ,  
Ես էլ չգիտեմ ինչու եմ սիրում.  
Իմ մոլար կեանքում մոռացայ ես ինձ...

Թէ անաչ բաղդի տարփանքը նորէն  
Հոգիդ կը յուզէ կարօտով անծիր,  
—Ախ լաց, դու միշտ լաց... բաղդը անօրէն  
Քեզ յետ չի գալու, սէր իմ, հասկացիր...

---

## 7

Մեղքի հմայքով մի կանչիր այսօր,  
Իմ նւաստ հոգին անվերջ մեղքերի  
Մի շինիր այսօր դու հլու գերի,  
Լալիս են անցած օրերս բոլոր...

Մի կանչիր այսօր դուն ինձ խենթօրէն.  
Ես թոյլ եմ, օգնիր, թոյլ եմ մոռացիր.  
Գաղտնիք օրերով դուն ինձ մի պատիր  
Ու մի նորոգիր անցածը նորէն...

Հանգչել ու թաղել ընդմիշտ, առյաւէտ,  
Պատրանք ու կանչեր անդարձ մոռանալ,  
Բնքշօրէն կանչել գալիքը մոայլ,  
Բնքշօրէն յիշել անցածը անհետ...

---

Ես ու դու նորից կապւեցինք էսօր...  
 Ախ, որքան սառն է էսօր աշխարհը,  
 Լացով եմ լսում շուշանք ու օրօր,  
 Ցաւով եմ պարում տարփանքոտ պարը,  
 Դիտեմ որ ժանգն է համբուրել լարը,  
 Բայց պատահեցինք ես ու դուն էսօր...  
 Այդպէս ամեն օր, այդպէս ամեն օր...

Այդպէս ամեն օր թաղում ենք անձայն  
 Տագնապները մեծ, յոյսը մահացող,  
 Ու սև երեկի մենք, որպէս պարման,  
 Ճամբռի ենք գնում շուշտանքոտ, անցող...  
 Ես՝ որպէս մոլար, որպէս խենթ, իսկ դու  
 Երազի նման անմեղ, այնպայման...  
 Կոշմարի նման, կոշմարի նման...

Ախ, որքան սառն է աշխարը էսօր...  
 Տանջանք, սոսկ, արցունք... արցունք ու ծրօր...

---

Այնքան մեղմ են, այնքան սուրբ  
 Ժպիտները քո հիմայ,  
 Ու չեն ձնշում սէրս նուրբ  
 Պատրանքները այսօրւայ...

Ինձ չես կանչում դու մեղքի,  
 Այսօր այնքան հեղ ես դուն,  
 Որպէս գարնան հմայքի  
 Ծաղիկները անանուն...

Մոռացել ես դու բոլոր  
 Արցունքները երեկւայ,  
 Այնքան փոքր ես դու այսօր,  
 Այնքան ճերմակ ես հիմայ...

Բայց ես գիտեմ, որ էգուց՝  
 Բարձրունքներից քո գահի  
 Դու կը պոկես իմ հոգուց  
 Երազները ներկայի...

Ժամանակի պէս մոլար,  
Կործանում ես ու կերտում  
Սրտում սիրող—սիրահար,  
Տկար ու թոյլ իմ սրտում...

Բայց դուն այսօր ինձ համար  
Այնքան մօտ ես այնքան հեզ...  
Եւ ժամանակ ես դու խոնարհ,  
Եւ սիրում ես դու այնպէս...

Երբ մթար գիշերին դու եկար,  
Քեզ համար մեհեանդ լ'հիւսէի,  
Ու սրտիս ցնորքները գոհար  
Քեզ համար ես պոկել կուզէի:

Դու եկար գիշերին մեղսածին—  
Կործանած երազներ մեղմական,  
Վէմ քարելը իմ շուրջը լացին.  
Ասացիր՝ ես աղջիկն եմ անկման...

Խենթ քամին հեռացաւ ու խնդաց,  
Նայեց ներս, մոլորւեց ու լացեց,  
Սիրտս խեղճ, այնպէս խեղճ հեկեկաց  
Ու իրեն քեզ համար վերապրեց...

# ԱՐԵՒԱԴԱՐՁ

Կանչեցի քեզ սրտիս կարօտով  
Մոռանալ այն գիշերն աշխարհում,  
Բայց տիսուր դու անցար իմ մօտով  
Ու կորար գիշերի խաւարում...

Խենթ քամին նայեց ներս ու խնդաց,  
Ճեռացաւ ու կրկին ծիծաղեց...  
Սէրս նուրբ տարակոյս հեկեկաց՝  
Ու նորից, մեռնելիս, քեզ կանչեց...

Չ'աղօթես գիշերի խաւարին՝  
Աղօթիր լոյսերին, արկի  
Կարօտից...  
Չը զարնես քնարի լարերին՝  
Թողնոքա հեկեկան նուրբ հովի  
Հեքիաթից ...

1

Յանկութիւնս ցան ու ցիր  
ես թողնում եմ ու գնում,  
ես ոչ ոքի չեմ սիրում,  
ի ձ մի փնտրիր, հեռացիր...

Շտապում եմ, մոռացիր  
Խոստումներս սիրահար,  
Երազները իմ անծիր  
Ես թողնում եմ անկատար...

Թալիսման եմ դտել ես  
Ալիքները կանչելու...  
Դուն իմ երգին ծանօթ չես,  
Նա այնտեղ է հնչելու...

Նոր աշխարհ եմ սիրելու  
Ալիքներից, փրփուրից,  
Նոր փէրի եմ հիւսելու  
Անտուն, անսիրտ, անթախիծ...

Ես սիրում եմ ծովանոյշ,  
Ծովի աղջիկ—անանուն...  
Ես սիրում եմ սառ համբոյր,  
Ես գնում եմ դէպ անհուն:

2

Հաշիշ են խմել պատերը այսօր,  
Ծածկիր կուրծքդ մերկ...  
Երգում են քարէ պատերը բոլոր  
Անօրէն համերդ:

Քո սուրբ մերկութեան հմայքը բոլոր  
Պաշարել է ինձ,  
Հաշիշ են խմել պատերը այսօր,  
Հեռացիր ինձնից:

Կարմիր ենք կապել ես ու ամեն ինչ,  
Ծածկիր կուրծքդ մերկ...  
Հէնները այսօր որոնում են նինջ...  
Անօրէն համերդ...

## 3

Դիւական ոյժ ունեմ իմ կեանքում

Դերի ոյժի հետ մաքառող,

Պատմւածք ես ունեմ իմ գրքում

Անձանօթ, լուսագեղ ու յաղթող...

Ես ունեմ իմ սրտում սուր կայծակ

Անտես, աննշան ու ահեղ,

Իմ խօսքում, քանց ծովում անյատակ.

Մըրիկ, փոթորիկ է այնտեղ...

Ես ունեմ ժպիտներ ու ծիծաղ,

Նոցանում շառաչող կապանքներ,

Սիրոյ մէջ ես ունեմ սև դագաղ,

Դագաղում ես ունեմ վառ յոյսեր...

Ես տէր իմ երգերի, փոթորկի,

Եւ ժպիտ, և խօսքեր, և յոյսեր...

Ես ունեմ անզարփակ մի հոգի.

Այնտեղ մահ, այնտեղ լոյս, այնտեղ սէր...

## 4. Թ Ը Ղ Ա Ւ Ր

Առյաւէտ սուզւեց զանգակը վեհանձ

Անեզը ծովի կապոյտ խորքերում...

Դու դեռ կը լսես ծովի երգերում

Բորբոք կանչերի տագնապը անանց:

Լեզւակը կ'երգէ թախիծն իմ անհաս,

Դու դեռ կ'իմանաս, դու դեռ կ'իմանաս...

Ու իմ անջատման երգը տխրագուժ

Ամեն տեղ կ'ասեմ, ամենին կ'ասեմ...

Կապոյտ խորքերում ես քեզ կը սպասեմ.

Այնտեղ կը թաղեմ կարօտս անուշ...

Թախծանքի ճիշով քո մահն եմ լալու.

Ա՛խ դու չես գալու... դուն էլ չես գալու...

## 5. Fenix

Ես հազիւ մեռնեմ—  
Նորից կը ծնւեմ,  
Եւ անցած օրի  
Մեղմիւ օրօրից  
Երգերից նորից  
Կը ստեղծեմ թախիծ:

Թէ կուզես՝ այսօր  
Երգերս բոլոր  
Միայն քեզ սիրեն,  
Միայն քեզ տիրեն.  
Ես նորից կը դամ,  
Ես կամ և չը կամ...

Մի օր եմ ապրում...  
Խաւար գիշերում  
Մեռնում եմ ես հեզ:  
Եւ լաւ է այնպէս  
Լոկ մի օր սիրել  
Լոկ մի օր ապրել:

Քիչ յետոյ ահա  
Գիշերը կը դայ՝  
Երգերն իմ անժիր  
Կը դառնան մոխիր...  
Լոկ մի օր ես կամ,  
Ես կամ և չը կամ...

## 6

Ես սիրում եմ հարսնացուին որ չը կայ,  
Որ չի ծնւել ոչ երկնքում, ոչ այստեղ...  
Ես եմ սէրը իմ հեռաւոր աղջկայ,  
Նա ապրում է եթերներում անաստեղ...

Ու բաժանւած մենք սիրում ենք իրարու...  
Իրիկունը՝ երբ վառւում են աստեղներ,  
Եւ՝ սիրահար, իմ ցնորքն եմ համբուրում,  
Որ ներհիւսեց այդպէս քնքոյշ ու նուրբ սէր...

Եւ աստղերը սօսաւում են ու կարծես  
Հարսնացուիս սիրոյ խօսքն են տալիս ինձ,  
Եւ ժպտում են, և թախծում են մեղմ ու հեզ,  
Եւ լալիս են, որ հեռու են իրարից...

Ես տալիս եմ իմ բարել աստղերին,  
Որ ուղարկեն նրան իմ նուրբ աղջկան...  
Այս, ես գիտեմ, ես գիտեմ որ իմ փէրին,  
Ինձ կանչում է կարօտանքով կուսական...

## 7. Պ Ե Ն Թ Է Ո Ւ

Փառազնուտ Աստղին ողջոյններ տւէք...  
Եւ աղերախը անուշ բամբիոնի  
Թող թունաւորէ երերումը հէք,  
Ու թող խնդացող սրաերը առնիւ...

Գալիս եմ ահա... գալիս եմ, որպէս  
Մեծ Արամազդի ժպիտը բերրի  
Ինձ ցողն է շոյում, կարծես Արալէզ,  
Սօսին է խօսում քանց քնքոյշ փէրի...

Սուրբ Արեգակնի օրհնելը պիտի  
Բարտի անտառում աղօթքով սիրեմ,  
Եւ Քոյր-Կրակից ուղարկած նետի  
Պատգամը ամբող, ամբող ես տիրեմ...

Աղբիւր-Եղբայրի կարկաչը սուրբ-սուրբ  
Պէտք է ըմբռնեմ ես այսօր գիշեր,  
ըբ Սօսիները կ'հէքիաթեն ինձ նուրբ,  
Երբ Քոյր-Լուսինը կ'ուղարկէ շողեր...

## 8. ՄՆԱԾ ԲԱՐԵՒԻՒՆ

Տխնւր գիշեր էր... ծիծաղ ու հանդէս  
Գարնան գիշերին քո նոր պալատում,  
Հիւանդ էր սիրտս... հիւանդ էր այնպէս...  
Տեսնում ես դուն ինձ ու չես հաւատում...

Դու չես հաւատում, որ ես՝ անճանաչ,  
Եկել եմ... ինչու... այդպէս ուշ... անհայց...  
Թո շուրջը վարդեր, քո շուրջը կանաչ,—  
Իսկ ես եկել եմ աւելորդ, յանկարծ...

Յոզնած, տանջւած հայեացքդ է վազում.  
Դու վախենում ես գաղտնիքից անմար...  
Դու... մոռացել ես... Դու չես մտածում,  
Որ ես եկել եմ տեսնելու համար...

Թո նոր պալատում գարնան գիշերին  
Դու թեթևորէն մօտովս անցար...  
Ես եկել էի մնաս բարեի,  
Մնաս բարեին՝ տեսնելու համար...

## 9. ՓԱՌԵՒ

Ես սպասել եմ հազար տարիներ  
Որ քեզ ընծայեմ մանեակը իմ հին,  
Շարել եմ անթիւ ազնիւ գոհարներ  
Կարմիր, ոսկեհուր, կապտագոյն, դեղին...

Երկնագոյն Յակինթ... թագուհի գոհար—  
Նա քեզ կը պահէ չարամիտ խօսքից:  
Իսկ սա, ահա տես, կարմիր նոնաքար  
Բերել են նրան ծովերի խորքից...

Թո մեծ մանեակում կայ Ոսկեբիւրեղ.  
Երբ դու ցանկանաս որ մէկը սիրէ.—  
Հպիր քո սրտին թալիսմանն ահեղ  
Եւ նա անցորդի սիրտը կը տիրէ...

Տեսնում ես, ահա, փոքրիկ Արևակ,  
Երբ հոգիդ յանկարծ կաշկանդէ թախիծ,—  
Համբուրիր քարը—Արևակն յստակ  
Քեզ կը փախցնէ մթար տրտմանքից...

Ահա քեզ Զմբուշտ անբիծ, լուսաւոր...  
Եթէ ուզեցիր մոռանալ մէկին,  
Ճոյց տուր դու նրան լուսնին հեռաւոր,  
Քարը կըմբռնէ քո վիշտն անմեկին...

Քոնն են բոլորը... նոքա իմը չեն.  
Ես արքաների զաւակն եմ այստեղ...  
Ես շատ եմ հարուստ... նոքա իմը չեն  
Եղիր ինձ համար դու Ոսկեբիւրեղ...

---

10

Խելառ, սիրահար եկել եմ հիմայ...  
Դու գուրս չես գալու, իմ անհոշ փէրի,  
Որպէս միզանուշ մոլար տենչերի,  
Սակայն ես եկայ, եկայ ակամայ...

Որպէս մի շրջիկ եկել եմ այսօր,  
Անցել եմ բոլոր ճամբէքը ահոտ  
Հեռու տեղերից եկել եմ քեզ մօտ,  
Որ լսեմ յանկարծ մոռացման օրօր...

Փառք անվերջ տանջրին և բաղդի օրւան՝  
Օ, ես ապրել եմ երգում երգերի...  
Եկել եմ հիմայ, որպէս մի գերի,  
Խնդրելու քեզնից մոռացման նիբւան...

---

## 11. ՓԱՂԱՌԻՆ

Լսիր, Միմոս, քո օրն այսօր գունատւեց  
Ու լուռ անցաւ քո խօսւածքը ծիծաղկոտ...  
Կրկէսն այսօր քեզ դատելով անպատւեց,  
Եւ կանգնած ես դու ամբոխին անծանօթ...

Մի օր առաջ... Բայց ամօթ է որ ծաղկուն  
Նախկին փառքի հիացքներով ծիծաղէ...  
Եւ անյաջող, պիտ հեռանաս այսօր դուն  
Ու տրորես պսակները քո ծաղկէ...

Հէզ ծաղրածու... Դու լալիս ես որ երեկ  
Վերջին անգամ քեզ ծափեցին թաթրոնում...  
Ծերացել ես, չես հանդարտի դու երբէք...  
Մարդիկ ջահէլ միմոսներ են որոնում...

## 12

Դէ, բարե մնաք...  
Իսկ ես չը գիտեմ,  
Ես էլ չը գիտեմ թէ ուր եմ գնում...  
Ճամբէքը անվերջ բացւել են իմ գէմ.  
Ո՞վ գիտէ արդեօք թէ ուր են տանում:

Գուցէ ես երթամ լանջերը սարի.  
Անվերջ որոնեմ ծաղիկ աղջկան,  
Գուցէ ես անցնեմ տաճարը չարի...  
Ինձի լուսաւոր ուղիներ չը կան...

Դէ, բարե մնաք... Ով գիտէ արդեօք  
Ուր կուզէ երթալ սիրտը իմ անյագ...  
Ես միշտ եմ գնում անխօս, անբողոք...  
Ցնորքները իմ արդեօք կիմանաք...

Դուք ինձ խաբեցիք մանկութեան օրից...  
Հոգիս սլացաւ իմ անուշ խաչին,  
Գուք ինձ մենեցիք անմեղ օրօրից,  
Դուք ինձ պատմեցիք հէրիաթն առաջին...

Մանկութեան օրից խաբել էք դուք ինձ.  
Հոգիս շինեցիք անթև մի թռչուն...  
Օ, մայր, օ, քոյր իմ, առաջին օրից,  
Առաջին օրից ես չունեմ անուն...

---

### 13. ԵԹԵԲԱՄՈԼ

Անունջ է այնքան ու չըկայ սահման  
Ժաղիբն ու ըմբոստ ցանկութեանն հոգուս,  
Որքան նոր դէմքեր եկան ու կերթան,  
Կերթան ու կրկին կերւան էգուց...

Մոլորման խարխափ... Հոգուս ծակքերում  
Երեկ և այսօր, էգուց ու անբաւ  
Եթերն անծանօթ ցնորք է բերում,  
Փոռուս է այնպէս հիազօր մի ցաւ...

Երտօր ու երկար աւիւնը հիւանդ  
Լուծւում է արնում որպէս սիրոյ տենչ,  
Եթերը այնտեղ հիւսում է տաղանդ,  
Եթերի մոլին երազում անվերջ...

---

## 14.

Ինչպէս անեմ, ինչպէս անեմ  
Որ չը սիրեմ ոչ ոքի,  
Ինչպէս ապրեմ, ինչպէս ապրեմ  
Որ չ'հանդիպեմ ոչ ոքի...

Այսօր ահա, այսօր ահա  
Հանդիպեցի քեզ յանկարծ,  
Սէրդ առայ, սէրդ առայ  
Ու խենթացայ ես յանկարծ...

Առաւօտ էր, առաւօտ էր  
Պատահեցինք ես ու դու,  
Կեանքը մօտ էր, կեանքը մօտ էր  
Ու սիրեցինք ես ու դու...

Ու լոկ մի օր, ու լոկ մի օր  
Հեքիաթեցինք երջանիկ,  
Սէրս հզօր, սէրս հզօր  
Մի օր սիրեց երջանիկ...

Եւ ժամերը և ժամերը  
Եկան, անցան, գնացին,  
Քո յոյսերը, քո յոյսերը  
Ղողանջեցին—գնացին...

Ինչպէս սիրեմ, ինչպէս սիրեմ  
Որ խարխափեմ սիրոյ մէջ,  
Ինձ նւիրեմ, ինձ նւիրեմ  
Անվերադարձ սիրոյ մէջ...

15. ՎԵԲՀ

Երազները իմ մարան ու կորան  
Ծաղիկները այսօրւայ ու գարնան...  
Ել ով գիտէ կը հանդիպենք ես ու դու,  
Ել ով գիտէ պիտ ճանաչենք իրարու...

Բաժանւեցինք այնպէս սառ սեղմոցով,  
Ես հեռացայ հէքիաթներս վինարելով,  
Դու որ այսօր մոռանում ես իմ հոգին՝  
Դու կը վառես հէքիաթները իմ նախկին

Որքան լաւ է միշտ ապրել այսօրով,  
Ու մոռանալ որ կայ սէր յոյսերով...  
Ես չեմ ցաւում որ օրերը իմ մարան,  
Չեմ ափսոսում, որ յոյսերը իմ տարան...

1. ՅՈՒՅՈՒՆԵՐ

Աշխարհում որքան շուտ... որքան շուտ  
Տրտմեցիք,  
Ու կարծես  
Խոնաւ մութ սիրեցիք դուք ինձ պէս...

Զերմասնուն երկինքներ մեռնելուս  
Կեանքի հետ  
Թաղեցէք...  
Չի գայ լուս մահից յետ ել երբէք...

Բայց գիտեմ ես երգեր որոնցով  
Նոր աշխարհ  
Կը փռւի՝  
Երազով գեղատարը և հեռւի...

Նոյն աստղով ստեղծւած կեանքին դէմ,  
Նոյն սիրուց  
Համազօր,  
Ես գիտեմ ձեղ վաղուց և այսօր:  
  
Ես գիտեմ՝ տրտմեցիք սիրելիս  
Դուք ազատ,  
Աներեր,  
Օ, ազիզ, հարազատ ընկերներ...

## 2

Իմ բոլոր օրերէն ամենից,  
Ամենից սիրեցի ես աշուն...  
Եւ բոլոր լուսերէն խօսքերից  
Սիրեցի ես քո խօսքն անանուն:

Արդեօք նվ կըմբռնէ նուրբ աշնան  
Խորհրդստ, նըրահիւս մենութիւն,  
Արդեօք նվ կիմանայ աննշան  
Ու վայրկեան կարոտի տիրութիւն...

Տիրութիւն անանուն ու լայկան...  
Իմ բոլոր լուսաւոր խօսքերից  
Մենակ այն պահեցի որ այնքան  
Որ այնքան ըմբռնեց նուրբ թախիծ:

## 3

Ինձ համար դու ճերմակ միշտ հագիր  
 Ու եղիր քիչ յոզնած, միշտ քնքոյշ,  
 Ծուլօրէն հուր-մազերդ արձակիր,  
 Դու եղիր դեռ չեղած միգանուշ...

Ինձ համար սիրահար երգումներ,  
 Ոչ մի օր, ոչ մի օր չը հիւսես.  
 Դու պատմիր չը պատմած հեքիաթներ՝  
 Ցնորքով ինձ ամբողջ կը յուղես...

Ինձ չասես որ այսօր պիտի գաս,  
 Պատգամներ չը պարզես իմ հոգուն...  
 Դու արի ինձ համար մի երազ  
 Լուսեղէն, հեռաւոր, կապտագոյն...

Չը բաղխես դու գալիս դուռը իմ,  
 Մօտեցիր մոռացած մի աստւած...  
 Դու եղիր ինձ համար մտելիմ,  
 Դու եղիր ինձ համար դեռ չեղած...

## 4

Ի՞նչ է յոյսը, ի՞նչ է լոյսը ինձ համար,  
 Ի՞նչ են բոլոր երազները լուսաւոր...  
 Լոյսը մութ է, իմ հոգին է լուսահար,  
 Թոյլ են բոլոր խոստումները քո այսօր:

Մոռանում ես իմ աշխարհը խենթօրէն...  
 Իմ աշխարհին երկրի հմայք էլ չի գայ;  
 Ինձ մի կանչիր, ինձ մի կանչիր անօրէն.  
 Քո երգերում ոչ մի ճերմակ խօսք չը կայ...

Ա՛խ, չը գիտեմ, դու կարնդ ես նւիրել  
 Հեքիաթները՝ սիրուն բոլոր երգերից,  
 Միթէ այնպէս դու կարող ես ինձ սիրել,  
 Որպէս մենակ շուշաններն են սիրում ինձ...

## 6. ԱՐԵՆՔ ԲՈՅԱՎՈՒ

Լինենք բոցավառ՝ որպէս արշալոյս.  
Գեղեցիկ է նա...  
Հոգիներս անփակ մթին մեռնելուս  
Երկնքում մնայ...

## 5. ԳԵՂԵՑԻ ԽԹԻ

Միայն մի վայրկեան հոգին թևաւոր  
Կ'ըմբոնէ ամբողջ հմայքը նորա,  
Եւ լոկ մի անգամ ցնձանքը բոլոր  
Կուտայ խենթօրէն փառքին այնօրւայ...

Եւ լոկ մի անգամ կը մեռնի հոգին...  
Երբ նա լուսատար գաղտնիքը կառնի,—  
Անփակ խոհերով, պատգամով անգին,  
Հիացքի դողից խկոյն կը մեռնի...

Լինենք մենք շուշան՝ ամաչկոտ, սիրուն,  
Սիրելու համար,  
Էլ ում են արդեօք սրտերը սիրում  
Ցնորքով խելառ...

Լինենք մենք ժաղիտ հազիւ ու դողդոջ  
Անվերջ փոթորկում,  
Ա՛խ, լինենք փոքրիկ, որ կեանքը ամբողջ  
Ապրի աղօթքում:

## 7.

իմ աստղն է կապում երկնակամարում  
Ոսկեհուր ճամբին լուսամէդ գռտի.  
Ես զուրս եմ զալիս մթոտ զիշերում  
Ու վերեմ տարփում թախծով լուսնոտի...  
  
Կանչում եմ նրան որ չի երևում,  
Ես ինձ եմ կանչում ու չեմ գտնում ինձ...  
Ո՞վ է իշխողը արդիօք վերեւում,  
Ո՞վ է ինձ մենել հարազատ ասաղից:  
  
Հեռաւոր իմ աստղ, սիրաս քեզ նւէր,  
Թող շողդ պայծառ բոլորին դերէ.  
Երբ գալող անզամ Յարդգողը գայ վեր—  
Կառեմ, կաղաչն, զուցէ ինձ բերէ...  
  
Յարդգողը այնպէս մեծ է ու բարի,  
Նա չի բարկանայ իմ խենթոտ սիրուն...  
Հեռաւոր իմ աստղ, կանչիր ինձ. արի...  
Աշխարհում մենակ ես քեզ եմ սիրում:

## 8

Դու անցար—ես տեսայ, ես տեսայ...  
Ես տեսայ, լսեցի ու լացի:  
Դու գիտես, ես քեզ նուրբ հասկացայ.  
Այս օրից ես մենակ մնացի...  
Երբ մի օր հանդիպենք լուսի դէմ  
Ես յոգնած, դու մենակ ու գունատ...  
Ամեն ինչ, ամեն ինչ կը պատմեմ...  
Իմ բոլոր յոյզերը, ես գիտեմ,  
Կը մբռնես դու մենակ ու գունատ,—  
Ոչ մի խօսք իմ անցած օրերի,  
Օրերի... արցունքոտ ու յոգնած,  
Օրերի, քեզ կանչող օրօրի  
Ոչ մի խօսք, ոչ մի կանչ կարօտած...  
Ես գիտեմ ամեն ինչ քեզ կ'ասեմ  
Երբ մի օր հանդիպենք լուսի դէմ:  
Քեզ կ'ասեմ, կը պարզեմ, կը սպասեմ,  
Ես գիտեմ, ես գիտեմ, ես գիտեմ...

Ամենից՝ ժպիտներու երանդ,  
Ամենից՝ շուշաններ, ցոլաբցունք  
Սիրեցի...  
Ես և կայ հիացքի նախերգանք,  
Ես գտայ փէրիները ծածուկ. —  
Տիրեցի:

Ժպիտներ... անսահման հեղութիւն  
Եւ անունջ իմաստի աստղիկեր  
Կը ցոլան..  
Ծիծաղում—թռւնաւոր կոպտութիւն,  
Ծիծաղում վայրենի ծաղիկներ  
Կերկան...

Չաղօթես գիշերի խաւարին՝  
Աղօթիր լոյսերին, արեի  
Կարօսից,  
Չը զարնես քնարի լարերին՝  
Թող նոքա հեկեկան նուրբ հովի  
Հեքիաթից...

Ես ինչպէս հասնեմ աստղին միամօր...  
Ու քանքարաւոր մարդիկ ինդացին  
Կարմիր ծիծաղով անմեկին հարցին,  
Բայց չըհասկացան կարօտն իմ հզօր:

Ես ինչպէս հասնեմ աստղին հեռաւոր.  
Ու գունատեցին իմ հարցի հանդէպ,  
Ահով նայեցին բարձրունքները սեպ,  
Բայց չըմբանեցին կարօտս հիազօր...

Փոքրիկ աղջկան հարցուցի մի օր,  
Թէ ինչպէս հասնեմ աստղին լուսաւոր...  
Եւ նա փայփայեց, և ժպտաց նա ինձ.  
Աստղերը երբեմն ընկնում են երկնից,  
Գուցէ և մարդիկ լինին թևաւոր...

Այդ օրից յետոյ ես մինչև այսօր  
Սիրեցի բոլոր հէքիաթները խոր...  
Աղջիկը կեանքս հէքիաթ դարձեց.  
Հոգիս այն օրից առյաւէտ սիրեց  
Աշխարհի բոլոր երազները խոր...

## O. U.-ին

De la musique avant toute chose...  
Paul Verlaine.

Դունատում ես դու գեղեցիկ յանդի դէմ  
Ու մարում են առկայձները քո կեանքի...  
Ես քո սէրը պաշարել եմ ու զիտեմ  
Որ կը նիրհես ելեէջում իմ յանդի,  
Դու սիրում ես ճեզութիւնը երանդի,  
Դու եկել ես լինել սիրող ու քնքոյշ,  
Ես քեզ զիտեմ որպէս ցոլքի միգանուշ.  
Դու ապրում ես եղած գերի հմայքի...  
Գունատում ես դու գեղեցիկ յանդի դէմ  
Եւ գոյները կործանւում են քո դիմաց...  
Ես, որ սէրդ պաշարել եմ,--չը զիտեմ  
Ո՞վ էր զգոյշ գըկեց հոգին իմ լացած...

---

Սիրտս, սիրտս, սիրտս, սիրտս,  
Հանգստացիր, մոռացիր,  
Ի՞նչ ես վնարում, խելառ սիրտս,  
Անուբջները ցան ու ցիր...  
Ո՞ւմ ես կանչում, խենթոտ սիրտս...  
Հեկեկա ու հեռացիր:

Աշխարհները անվերջ, անփակ,  
Ցոլցոլում են քեզ համար...  
Դու պարփակիր, սիրտ իմ, նոր կեանք  
Աստղերի մէջ սիրահար,  
Քեզ կը հիւսէ ճերմակ փափագ  
Հօրիզոնը հեռատարը...

Դու եկել ես հրդեհլու  
Բագինսները աշխարհի...  
Դու եկել ես մեզ տանելու  
Պաղանիքները կամարի...  
Դու սիրում ես, կեանքին հլու,  
Մեհեանները ինաւարի...

Քեզ կանչում են հեռունները.  
Հեռունները հեռացիր,  
Քեզ սիրում են երկինքները.  
Երկինքները սլացիր...  
Սիրտս, սիրտս, սիրտս  
Երկրայինը մոռացիր...

---

Ճերմակ ծաղիկներ ամենից առաջ.  
Ել ով է սիրում կարմիրը խանգոտ.  
Լիսինք հեռաւոր արևների մօտ,  
Ամենից առաջ, ամենից առաջ...

Ո՞վ է աղօթում տաճարում աղօտ.  
Յակինթ ծովերի երկինքը սիրենք,  
Արձակ անվերջին աղօթքներ բերենք...  
Մենք ապրել կուղենք արևների մօտ...

Սուտ է ամեն ինչ. լինենք երաժիշտ,  
Սիրենք համերգը հեռու աստղերի,  
Իմաստը ապրի խօսքերի գերի  
Որպէս մի անզէն ու տաղտուկ նաժիշտ...

Սիրենք ժպիտներ, հէքիաթներ հիւսենք.  
Անդարձ, անանուն, անվերջ, անսահման,  
Բագինը կեանքի թողնենք մոռացման.  
Մենք չենք հաւատում: Մենք այդպէս կուղենք:





ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

18564

2013

